ի մայրաքաղաքն Ֆրանկիոյ, ի մեծանուն և ի ճարտարարուեստ Բէցդըման ռուս նկարչէ. որոյ գործ է և խաչելութեան պատկերն՝ կախուած ընդ մէջ երկու խորանաց, աւագին և սրբոյ Պատուհասեցոյն խորանաց։

Եկեղեցւոյս առաջին ժողովրդապետն եղած է՝ ոմն Օգոստինոս քահանայ Ճէննառի, գենուացի, ազգաւ իտալացի։ Ինք եղած է, ինչպէս կը վկայէ ի կեան արձանագրութեանց մատենին եկեղեցւոյ, հիմնադիր Օտեսսայի կաթոլիկաց եկեղեցւոյն. և ապա առաջին ժողովրդապետ ի Թէոդոսիա յամի 1807 ի 24 Նոյեմբերի. և շարունակեր է ի նոյն պաշտաման մինչ ի վերջ 1819 տարւոյն. Սիմֆէրոպոլի քաղաքի ժողովրդապետի անուամբ ալ յիշատակուած և արձանագրուած կը գտնենք զինքը։ Նոյն ատենէ մնացած եկեղեցական մատենից մէջ՝ Ճէննառի քահանայէն ետքը՝ երկու կաթոլիկ հայազգի քահանայից անուանք ալ կը յիշուին. և են տէր Գրիգոր Կոսիկեան և տէր Սահակ Յովնանեան որ ի յատուկ ստորագրութեանն կ'անուանէ զինք ժողովրդապետ եկեղեցւոյն Եւպատորիոյ (Կէօզլէվ). կայ և Խաչատուր կանոնիկոս վարդապետ մը Տուհայեան՝ ժողովրդապետ եկեղեցւոյն Խարսուի։

1819 ին առաջին անգամ մուտ գտած է Թէոդոսիոյ եկեղեցւոյն արձանագրութեանց մէջ հայ լեզուն. որ և այսպիսի սկզբնաւորութիւն ունի. «Ես Հ. Պողոս Տէրվիշեան՝ քահանայ եկեղեցւոյս Կաֆայի ուղղափառաց» և այլն։ Ինքն էր յուխտէ Անտոնեան հարց որ ի Լիբանան, և ժողովրդապետական պաշտօնը կատարած է մինչ ի 1826։ Հետևեալ տարիէն կը սկսուին արձանագրութիւնքն